ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 52

ք. Երևան 25.05.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հրաձգության ուղղության ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-2/8» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Պռոմմոնտաժ» ՍՊԸ-ն /ՀՎՀՀ՝ 06969178, գործունեության հասցե՝ ՀՀ ք.Վանաձոր, Հերացի 7-33/1 (այսուհետ՝ Մասնակից):

13.04.2023թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակցի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող, քանի որ վերջինս չէր ներկայացրել 11.04.2023թ. նիստով արձանագրված անհամապատասխանությունների շտկումները:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և ընթացակարգի հրավերի 8.10 կետերի պահանջները՝ եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար, հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը, որոշում եմ՝ «Պռոմմոնտաժ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ